# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48»

Բնապահպանության նախարարության կարիքների համար «Համակարգչային տեխնիկայի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի հոկտեմբերի 24-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2018 թվականի հոկտեմբերի 25-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N 1:** Հարգելի գործընկեր խնդրում ենք տալ պարզաբանում N ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48 ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի մասով.
Համաձայն ԳԲԽ-ԱՄ 2018/80 բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքների քննող անձի ս.թ. օգոստոսի 28-ի որոշմամբ արտադրողի կողմից տրամադրվող MAF-ի (նույն տրամաբանությամբ և պատճառաբանությամբ նաև DAF-ի) ներկայացման պարտադիր պահանջը որակվել է որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքների անհամապատասխան:
Վերոգրյալից ելնելով N ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48 հրավերի տեխնիկական բնութագրում նշված հետևյալ բովանդակությունը.
«Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է ՀՀ ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար» հավասարազոր է MAF կամ DAF սերտեֆիկատ ունենալու պահանջին:
Երաշխիքային սպասարկում մատակարարը կարող է իրականացնել իր տարածքում, այլ ոչ «արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում»:
Խնդրում ենք հաշվի առնելով վերոգրյալը չսահմանափակել մասնակիցների մասնակցությունը տվյալ մրցույթին:

**Պարզաբանում N 1:** ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48 ծածկագրով մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում նշված՝ «Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար» հրավերի պահանջը չի առնչվում ԳԲԽ-ԱՄ 2018/80 բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձի 28.08.2018թ. որոշմանը:
Վերոնշյալ պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ երաշխիքային սպասարկման ժամկետի ավարատից հետո տարածաշրջանի համար չարտադրված նմանատիպ ապրանքների հետագա սպասարկումն ու շահագործումը շահավետ չէ և որակյալ ապրանքի ձեռքբերման և երաշխիքային սպասարկման պահանջը չի սահմանափակում մասնակիցների մասնակցությունը մրցույթին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 514:
Էլեկտրանային փոստ՝ gnumner.mnp@yandex.ru:

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով